

Վ. ԿԱՐՈՎԻՆ

Բ Է Պ Պ Օ

Թարգմանութիւն ռուսերէնից:



Թ Ի Ք Լ Ի Ս

Յարսան Մ. Շարաձէի, Նիկոլ, տ. 21.

1896

Սերէք

354

2004

ՍՏԻՍԷ  
356

ՅԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԷԼԻԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
Կ. Մանուկյանի 2/12

ՅՈՐՏ

Կ.

Վ. ԿԱՐՈՎԻՆ

Բ Է Գ Գ Օ

Թարգմանութիւն ուստերէնից:

345



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձէի, Նիկոլ, ա. 21.

1896

1139

Дозволено Цензурою, Тифлисъ, 28 Мая 1896  
года.



354-2004

[4157/9-  
41

18354

Բ Է Գ Գ Օ

Ա.



ատ տարիներ առաջ, Մու-  
կուայում ապրում էր  
մի աղքատ նուազա-  
ծու իւր ուրդի Բէպ-  
պօի հետ: Նա Իտա-  
լիայից եկել էր Ռու-  
սաստան՝ նուազածու-

թեամբ մի կտոր հաց աշխատելու:

Խեղճը մինչև անգամ յուս ունէր, թէ մի  
փոքրիկ դրամագլուխ կկազմէ և լետոյ հայրե-  
նիք կվերադառնայ: Բայց բոլորովին այդպէս  
չեղաւ: Այդպիսի նուազածուներ մեզ մօտ շատ

կան, բայց նրանց միայն կոպէկներ են տալիս: Բէպպօի հայրը սաստիկ կարիք էր ըզգում: Նա ապրում էր քաղաքից դուրս, մի տան ստորին ու խոնաւ յարկում, որտեղ արեգակի ճառագայթները հազիւ էին ներս թափանցում. յաճախ նա մի քանի օր քաղցած էր մնում, որովհետեւ նրա ստացած կոպէկները բաւականանում էին միայն տան վարձի համար: Զմեռը, սաստիկ սառնամանիքին, նա փողոցներում թափառում էր ցնցոտիներով, կանգ էր առնում լուսամուտների առաջ ու զանազան ուրախ եղանակներ նուագում. իսկ նրա սիրելի, խելօք Բէպպօն ստիպուած էր սառած ոտքերով պարել: Մի խօսքով նրանք սաստիկ աղքատ էին:

Ծերունի նուագածուն չղիմացաւ Ռուսաստանի ցուրտ կլիմային, սաստիկ հիւանդացաւ և մահուան անկողնի մէջ ընկաւ:

Բէպպօ, որդեակ իմ, — մեռնելուց առաջ ասաց նա իւր որդուն, — ես մեռնում եմ և դու մենակ ես մնում: Լաւ նայիր շուրջդ արդեօք սենեակում չունենք մի որևէ բան,

որ կարողանայի քեզ ժառանգութիւն թողնել: Բէպպօն նայեց բոլոր անկիւնները, պահարանները, մինչև անգամ վառարանը, բայց ոչինչ չգտաւ: Հօր հիւանդութեան ժամանակ ծախել էին քիչ թէ շատ արժէք ունեցող բոլոր իրերը. մինչև անգամ այն երաժշտական գործիքը, որով նրանք փող էին աշխատում:

— Թարէքի վերայ որոնիր, գուցէ այնտեղ մի բան գտնես, ասաց հիւանդը:

Բէպպօն բարձրացաւ սեղանի վերայ և զննեց թարէքը: Այնտեղ թողի մէջ մի հին տուփ էր միայն ընկած, որի մէջ երեք լուցկի կար:

— Հայրիկ, այստեղ երեք լուցկի կայ:

— Ուրիշ ոչինչ:

— Ոչինչ:

Լաւ, մօտեցիր և կանգնիր ինձ մօտ:

— Դու միշտ բարի զաւակ ես եղել և սիրով օգնել ես ինձ. տկարութեանս ժամանակ նոյնպէս հօգում էիր իմ մասին. թող Աստուած օրհնէ և վարձատրէ քեզ, իսկ ես, ինչպէս տեսնում ես, ոչինչ չունեմ թողնելու քեզ հա-

մար: Բայց վերցրու այս երեք լուցկիւն, նրանք քեզ երջանկութիւն կրեան, եթէ օգտաւէտ կերպով գործադրես... Բէպպօ, յիշիր այս...: Նուագածուն մեռաւ. նրան թաղեցին տէրութեան հաշուով. իսկ Բէպպօին տանից դուրս արին, որովհետեւ բնակարանի վարձը վճարելու համար ոչինչ չունէր: Պատառոտած զգեստով, մաշուած կօշիկներով և գլխարկով, Բէպպօն դուրս գնաց փողոց: Վիզն ու կուրծքը փաթաթեց հօր հին թաշկինակով, ձեռքերը ծոցը դրեց, որ չսառչեն և թափառում էր քաղաքի փողոցներում՝ մտածելով թէ ինչ գործ սկսէ: Բէպպօն հօրից ստացած երեք լուցկիները խնամքով փաթաթել ու գրպանն էր դրել: Նա ուրիշ ոչինչ չունէր:

**Բ.**

Ձմեռ էր և դուրսը սաստիկ ցուրտ:

Բէպպօի դրութիւնը սարսափելի էր: Վատ շորերով, առանց մի կոպէկ ունենալու գրպանում, առանց ազգականների և բարեկամների, նա պէտք է կորչէր այդ մեծ քաղաքի փողոց-

ներում: Բայց Բէպպօն խելօք, քաջ և առողջ տղայ էր. նա սովոր էր ամեն տեսակ կարիք ու զրկանք տանել և այդ պատճառով էլ այժմ չյուսահատուեց և քաջութեամբ կուռում էր իւր անբաղտութեան դէմ:

Մի տօն օր, երբ Բէպպօն անցնում էր եկեղեցու մօտով, այնտեղից իւր երեսխաների հետ միասին դուրս եկաւ մի շքեղ հագնուած տիկին:

— Տես, մայրիկ, բացագանչեց յանկարծ մեծ աղջիկը, այդ այն տղան է, որ մի քանի անգամ պարել է մեր պատուհանների առաջը. Խեղճն ի՞նչպէս սառել է:

Բայց ինչո՞ւ մենակ է և առանց ծերնուագածուի. մօտենանք ու հարցնենք:

Տիկինը կանչեց տղային և երեսխաներն անմիջապէս շրջապատեցին նրան: Բէպպօն Խտալացի լինելով՝ ոռուսերէն խօսել լաւ չէր սովորել և այդ պատճառով հազիւ կարողացաւ մի կերպ հասկացնել իւր դրութիւնը: Երեսխաներն ուշադրութեամբ լսում էին՝ զիտելով այդ թշուառ տղայի հագուստը:

— Ի՞նչ հիմա զրտեղ ես ապրում, — հարցրեց տիկինը:

— Դեռ ևս ո՛չ մի տեղ, տիկին, պատասխանեց Բէպպօն:

— Ի՞նչ ես մտադիր անելու:

— Դեռ չգիտեմ:

— Մայրիկ, ի՞նչ սարսափելի գրուածիւն է, ասաց մեծ աղջիկը:

— Պէտք է օգնել նրան: Կօգնենք նրան, մայրիկ: Տանենք մեր տուն:

Տիկինը մտածեց, գլուխը շարժեց և Փրանսերէն պատասխանեց, որ Բէպպօն չհասկանայ. «այժմ չենք կարող նրան մեր տուն տանել. դու գիտես, որ հօրեղբայրդ տկար է — ո՞վ պէտք է դրա համար հոգայ»:

Աղջկայ աչքերից արտասուքներ թափուեցան, իսկ տիկինը քսակից հանեց մի քանի արծաթեայ դրամ և տուեց տղային: Բէպպօն շնորհակալութեամբ վերցրեց փողերը և նոր ծանօթները միմեանցից բաժանուեցան: Դեռ երկար ժամանակ աղքատ տղան և հարուստ աղջիկը յետ էին նայում և միմեանց

գլուխ տալիս: Այժմ Բէպպօն շատ հարուստ էր, արծաթեայ փողերը գնդգնդում էին նրա գրպանում: Բայց նա խկապէս փողերով չէր հետաքրքրուում: Նա մտածում էր այն կարմրայտ հարուստ աղջկայ մասին, որի աչքերից յորդառատ արտասուք էր թափուում. նա բուրովին չէր սպասում, թէ կգտնուի մէկը, որ կհամակրէ իրեն:

Այս մտածմունքի մէջն էր Բէպպօն, երբ յանկարծ մէկը յետևից ձեռքը դրեց նրա ուսին: Բէպպօն յետ նայեց. նրա առաջը կանգնած էր նոյն աղջիկը:

— Ի՞նչպէս է ձեր անունը, հարցրեց նա շնչասպառ:

— Բէպպօ:

— Իսկ իմ անունը — Մերի է:

Աղջիկը յետ վազեց, որ իւր մօրը հասնի: Բէպպօն երկար ժամանակ նայում էր աղջկայ յետևից: Մերին վաղուց արդէն անյայտացել էր, բայց նա կանգնած էր ապշած և կարծես թէ մեխուած լինէր գետնին:

— Այստեղ ինչո՞ւ ես կանգնել, բարկացաւ

Նրա վերայ ոստիկանը, հեռացիր:

Բէպպօն նոր զգաց, որ իւր ոտքերը ցըրտից թմրել էին և պէտք է մի բան ուտէր, որ քաղցից ուժասպառ լինելով վայր չընկնէր:

Ք.

Բէպպօն մտաւ այն անմաքուր ճաշարաններից մէկը, որտեղ երեք կոպէկով կարելի էր տաք արգանակ ստանալ. ամեն օր այդ ճաշարանն էին յաճախում աղքատ մարդիկ և ախորժակով ուտում փթած նիւթերից պատրաստած կերակուրները:

Բէպպօն կերաւ իւր բաժինը, լաւ տաքացաւ և ճաշի փողը վճարելով իւր քայլերն ուղղեց դէպի դուռը: Նոյն ընկերին դուռը բացուեց և մի այնպիսի բան երևաց, որ Բէպպօն ստիպուեց մի քայլ յետ քաշուել: Խեղճ Բէպպօն շատ էր տեսել ամեն տեսակ թշուառ, աղքատ և քաղցած մարդիկ և ապրելով միշտ իրեն նման թշուառների շրջանում, սովոր էր տեսնել լղար դէմքեր, ցնցոտիներ և կեղտոտութիւն, բայց նրա այժմեան տեսածը գե-

րազանցում էր առաջուայ տեսածներին: Նրա առաջը կանգնած էր մի տղայ, որի մէջ մարմնացած էր աղքատութիւնն ու տանջանքը: Նա հազիւ էր կարողանում ոտքերի վերայ կանգնել. նրա դեղին, մեռելային գէմքը, գունատ շրթունքները և դողդօջուն անդամներն ապացուցանում էին, թէ նա ի՞նչ չարչարանք է քաշում: Նա ոչինչ չուներ հագին, այլ փաթաթուած էր մի քանի միմեանց կպցրած փալասների մէջ:

Խեղճը չորս կողմը նայեց և իւր պոտոր աչքերն ուղղեց Բէպպօնի վերայ: Բէպպօն էլ նրան էր դիտում. այդպիսով մի ընկեր կուսն էլ կանգնած՝ միմեանց էին նայում:

—Քաղցած ես, հարցրեց վերջապէս Բէպպօն:

—Երկու օր է ոչինչ չեմ կերել, թոյլ և հազիւ լսելի ձայնով պատասխանեց խեղճ երեխան:

—Մենակ ես:

—Մայր ունեմ, բայց հիւանդ է:

—Իսկ փող ունե՞ս:

— Ոչինչ չունեմ:

— Ինչո՞ւ ես եկել այստեղ:

— Երեք օր առաջ այս ճաշարանի տէրն ինձ ճաշից մնացած զանազան փշրանքներ տուեց ուտելու: Հիմա էլ դրա համար եկայ: Ամաչում եմ պմեն օր խնդրել՝ վախենալով թէ մի գուցէ այդ զէպքում բոլորովին ոչինչ չտայ. մօտիկ ուրիշ տեղ էլ չկայ որ խնդրեմ, իսկ հեռու գնալ չեմ կարող այս սառնամանիքին, ասաց խեղճը և աչքերն ուղղեց իւր ցնցոտիների վերայ:

— Իսկ մայրդ ո՞րտեղ է:

Խեղճը դողդողաց և լաց եղաւ:

— Լա՛ւ, արի, նստիր և մի քիչ բան կեր, ասաց Բէպպօն, յետոյ կիսօսենք:

Իւր անսպասելի հիւրի համար Բէպպօն բերել տուեց երկու տեսակ կերակուր, իսկ ինքը նայելով զուարճանում էր՝ թէ ի՞նչպիսի ախորժակով է նա ուտում իւր բերել տուած կերակուրը:

— Անունդ ի՞նչ է, հարցրեց Բէպպօն, երբ ընկերը վերջացրեց արգանակը:

— Հենրիկոս Վինկլէր:

— Ի՞նչ:

— Ազգանունս Վինկլէր է, իսկ անունս Հենրիկոս: Ես օտարական եմ, թէպէտ Ռուսաստանումն եմ ծնուել: Հայրս ճարտարապետ էր: Մենք այստեղից շատ հեռու էինք ապրում, Ուրալի վերայ, բայց երբ.....

— Դեռ կէր, ասաց Բէպպօն, յետոյ կպատմես: Օտարականն սկսեց ուտել երկրորդ տեսակը:

— Դու էլ ուս չես երևում, ասաց Հենրիկոսը՝ գշալը վերջին անգամ զէպի բերանը տանելով:

— Ես իտալացի եմ, անունս Բէպպօ է. ազգականներ ու ծանօթներ չունեմ, բայց զրպանումս մի քանի արծաթեայ դրամներ կան — այսպէս ներկայացրեց իրեն Բէպպօն:

Քառորդ ժամից յետոյ երկու ընկերները զուրս եկան փողոց և Հենրիկոսը պատմեց Բէպպօին՝ իւր տխուր պատմութիւնը:

Հօր մահից յետոյ նա և իւր մայրը մնացել էին բոլորովին աղքատ: Պէտք էր ապ-

րուստի մի միջոց գտնել: Նրանք ծախսեցին տան բոլոր իրերը և ստացած փողերով գնացին Մոսկուայ, որտեղ Հենրիկոսի մայրը յոյս ունէր զաստիարակչուհու պաշտօն գտնել: Երեք ամիս արդէն Մոսկուայումն էին ապրում, բայց բանից զուրս եկաւ, որ տեղ ստանալն այնքան էլ հեշտ չէր, ինչպէս նրանք կարծում էին. մանաւանդ որ այդտեղ ո՛չ ազգական և ո՛չ ծանօթ ունէին: Իրենց ունեցած փողն էլ ծախսեցին և մայրը վշտից ու զըրկանքներից տկարացաւ. այդպիսով նրանք ստիպուած էին ողորմութիւն խնդրել:

— Իսկ ազգականներ ունէս, հարցրեց Բէպպօն:

— Մի մօրեղբայր ունեմ, բայց թէ հիմա սրտեղ է գտնուում նա, չգիտենք: Ասում են, որ մի ժամանակ ապրում էր Ռուսաստանում: Մենք նամակագրութիւն չունէինք նրա հետ, որովհետև հօրս հետ լաւ չէր. այդպիսով ահա՛ արդէն եօթը տարի կլինի, որ մենք չգիտենք թէ նա սրտեղ է:

Վերջացնելով իւր պատմութիւնը, Հեն-

րիկոսն առաջարկեց Բէպպօին իրենց մօտ գնալ և տեսնել՝ թէ ի՞նչպէս են ապրում ինքն ու իւր մայրը:

Բէպպօն ուրախութեամբ համաձայնուեց, որովհետև բացի կարեկցութիւնից՝ նա մի տեսակ համակրանք էլ զգաց դէպի այդ խեղճ երեխան:

Դ.

Վինկլէրի բնակուած տան բոլոր կեցողներն աղքատ էին: Այդ տունը գտընուում էր Մոսկուայի ամենայետրնկած թաղերից մէկում: Կեղտոտ ու խոնաւ սանդուխտից ներքև իջնելով՝ ամեն բանի սովոր Բէպպօն մինչև անգամ զարմացած էր այդ բնակարանում տիրող ցրտի և խոնաւութեան վերայ: Երկու պատանիներն էլ մօտան այն նեղ ու մութ միջանցքը, որի երկու կողմը գտընուում էին փոքրիկ և ձիու ախոռներին նմանուող բնակարանները: Այդ սենեակներից մէկում ապրում էր Հենրիկոսն իւր մօր հետ:

Վինկլէրը զուռը բաց արեց և հրաւիրեց

Բէպպօին, որ զգուշութեամբ ներս մտնէ: Սե-  
 նեակն էլ միջանցքից աւելի լոյս չէր. փոքր  
 պատուհանի միջով այնչափ քիչ լոյս էր ներս  
 թափանցում, որ Բէպպօն մի քանի ըրպէ ո-  
 չինչ չկարողացաւ օտեսնել, մինչև որ նրա աչ-  
 քերը սովորեցին այդ մթութեանը: Այդ տեղ  
 էլ նոյն խոնաւ և ցուրտ օդն էր. պատերից  
 ջուրն աղբիւրի պէս ցած էր թափւում՝ կեղ-  
 տոտ, երբէք չմաքրուած յատակի վերայ: Այդ  
 խաւար սենեակում բացի մի սեղանից ու եր-  
 կու հատ ոտքը կոտրած աթոռից՝ ոչինչ չկար:  
 Այսպիսի սարսափելի հանգամանքների մէջ՝  
 թախտի վերայ պառկած հառաչում և զառան-  
 ցում էր մի երիտասարդ և գեղեցիկ կին, Հեն-  
 րիկոսի մայրը:

Զնայելով որ Բէպպօն այնքան էլ փափ-  
 կասիրտ չէր, բայց և այնպէս ծուռնկ չօքելով՝  
 սաստիկ լաց եղաւ տարաբաղտ և չարչարուող  
 կնոջ անկողնի առաջ:

Այս սարսափելի, անտանելի է, ասաց  
 նա իւր ընկերոջը, որ մօր գլխի վերևը կանգ-  
 նած լաց էր լինում:— Պետք է սենեակը տա-

բացնել և բժշկին կանչել, կամ թէ գոնէ  
 պէտք է հիւանդին թէյ խմեցնել....

— Սենք ոչինչ չունենք, ասաց Հեն-  
 րիկոսը:

— Ես փող ունեմ: Բաւական է ինչ որ  
 լաց եղար, այժմ պէտք է գործ սկսել: Վա-  
 զիր շուտ փողոց և մի քիչ թէյ, շաքար ու  
 փայտ գնիր. իսկ ես իսկոյն կվազեմ բժշկի  
 յետևից:

— Բժիշկը չի գայ....

— Ի՞նչպէս թէ չի գայ, անպատճառ կը  
 բերեմ:

Այդ ըրպէին այնքան եռանդ, ոյժ և վրճ-  
 ուականութիւն փայլեց Բէպպօի աչքերում,  
 որ մեծ հաճոյքով կարելի էր նայել նրան:  
 Նոյն եռանդով վարակուեց անմիջապէս նաև  
 անփորձ Հենրիկոսը:

— Գնանք, ասաց նա:

Եւ երկու բարեկամներն էլ դուրս վա-  
 զեցին փողոց:

Բժշկի տունը հեռու չէր, Բէպպօն շու-  
 տով գտաւ և զանգը տուեց:

Դուրս եկաւ ծառան:

354-2009  
 345  
 (4157/41)



— Ի՞նչ ես ուզում, թխահեր, բարկացած  
ասաց նա երեխային:

— Բժշկին... կինը մեռնում է... Ի սէր  
Աստուծոյ, շնորհ արէք:

— Կորիւր այստեղից, իմ պարոնը հէնց  
էն է, քեզ պէսների յետևից է գալիս:

Բէպպօն հասկացաւ թէ բանն ինչումն է:

— Շատ հարուստ կին է, ստեց նա, հի-  
ւանդն անպատճառ ցանկանում է այս բժշկի  
մօտ բժշկուել: Ներս թողէք ինձ, ես նրան  
ամեն բան կբացատրեմ:

Ծառան կասկածանքով նայեց Բէպպօի  
պատառոտած զգեստների վերայ, բայց և այն-  
պէս տարաւ նրան բժշկի շքեղ զարդարուած  
ընդունարանը:

Բժիշկը դուրս եկաւ:

Բէպպօն յուզմունքից դողացող ձայնով  
մի քանի խօսքերով պատմեց նրան խեղճ կը-  
նոջ սարսափելի դրութիւնը և աղաչում էր,  
որ անմիջապէս զնայ նրա մօտ:

— Ես հիւանդներին ընդունում եմ չորեք-  
շաբթի և ուրբաթ օրերը, առաւօտեան ժամի  
իննից մինչև տասը, սառնասրտութեամբ պա-

տասխանեց բժիշկը:

— Բայց նա չէ կարող մանգալ, ուժաս-  
պառ է և զառանցում է, բացի դրանից՝ տա-  
նից դուրս գալու համար հագիւ թէ հագնե-  
լու բան ունենայ:

— Ժամանակ չունեմ, զբաղուած եմ...  
յոգնած եմ...

— Խղճացէք, աղաչում էր Բէպպօն:

— Չեմ կարող: Հիւանդներին ես ընդու-  
նում եմ չորեքշաբթի և ուրբաթ օրերը, ին-  
նից մինչև...

— Բժիշկ, ընդհատեց նրան Բէպպօն,  
ես մի անտուն, անտէր ու աղքատ որբ եմ,  
չգիտեմ թէ վաղն թնչ կպատահի ինձ, բայց  
քսան կոպէկ ունեմ, ահա, վերցրէք իմ քսան  
կոպէկը ձեր աշխատանքի փոխարէն...

Բժիշկն այդ խօսքերը լսելով՝ բոլորովին  
զինաթափ եղաւ:

— Ազգականդ է այդ կինը, հարցրեց նա:

— Ո՛չ, միայն քառորդ ժամ առաջ տեսայ  
նրան առաջին անգամ:

— Դէ ուրեմն զնանք, քսան կոպէկդ պա-  
հիր... Զարմանալի տղայ ես... Հեռու է բը-

նակում հիւանդը:

—Ո՛չ, այստեղից սկսած չորրորդ տունն է նրա բնակարանը:

—Գնանք, միայն թէ առաջ հինգ ընդհանր ես պետք է մի ուրիշ հիւանդի մօտ գնամ, որովհետև այժմ ինձ սպասում են այնտեղ: Դու կարող ես հետս գալ... առանց քեզ դժուար թէ գտնեմ քո հիւանդին, ով գիտէ թէ ինչ յետընկած անկիւններումն է նրա բնակարանը:

—Սյո՛... ուզում էր սկսել Բէպպօն, բայց յանկարծ մտածեց ու սասց.

—Ո՛չ, նրա բնակարանը վատ չէ:

Ե.

Մի քանի ընկերացիներու, Բէպպօն սահնակում բժշկի յետևից կանգնած՝ անցնում էր Մոսկովայի փողոցներով: Սահնակը կանգ առաւ մի շքեղ զարդարուած տան առաջ, որի դռները շինուած էին հաստ կաղնուց: Տան կողքին գտնուում էր ցանկով շրջապատուած մեծ այգին: Ամեն բանից երևում էր, որ այստեղ շատ հարուստ մարդիկ էին բնակ-

ւում: Բժիշկն այցելեց իւր խնամքին յանձնուած հիւանդին և զէմքի դժգոհ արտայայտութեամբ վերադարձաւ: Բէպպօն նկատեց, որ բժիշկն սկսում է տատանուել. նրա զէմքի վերայ կարելի էր կարգալ. «արդեօք գնամ, թէ վաճառեմ այս գլխորած անպիտանին»: Բէպպօն մտածելով թէ բժիշկը կարող է հրաժարուել հիւանդին այցելելուց՝ սարսափեց ու ինքն իրեն սասց. ինչո՞ւ այսքան ժամանակ կորցրի, ուրիշ բժիշկ ո՞րտեղ գտնեմ այժմ:

Բէպպօն ամեն միջոց գործ դրեց, որ բժշկին զուարճացնէ և նրա վատ տրամադրութիւնը փոխէ. նա խօսում էր, կատակներ էր անում, բարերար էր անուանում նրան, ուղղում էր նրա վերարկուն, գովում էր նրա ձիերը. մի խօսքով—գործ դրեց այն բոլոր միջոցները, որոնք նրա կարծիքով կարող էին մեղմացնել մարդկանց սիրտը:

Բէպպօնի բաղտից սահնակը, վերջապէս, կանգ առաւ Վինկլէրի բնակած տան դրան առաջը: Արդէն մուտն էր և փողոցներում սկսել էին լապտերներ վառել:

Ամեն մի քայլափոխին սայլածքելով և

քթի տակ փնթփնթալով՝ բժիշկն անցաւ մու-  
թը ու կեղտոտ բակը և հասաւ մի դրան, որ-  
տեղից սանդուխքով պէտք է իջնէր ներքևի  
յարկը: Այդտեղ անյայտի անթափանցելի խա-  
ւար էր տիրում, որ սանդուխքի հէնց առա-  
ջին աստիճանների վերայ բժիշկը ճակատը խը-  
փեց մի ինչ որ տախտակի, ցնցուեց և քիչ  
մնաց որ վայր ընկնէր: Բէպպօն հազիւ կարո-  
ղացաւ նրան բռնել:

Մի քանի աստիճան իջնելուց յետոյ՝ թե-  
քուելու միջոցին, բժշկի քիթը դիպաւ պատի  
խոնաւ քարին, իսկ երկու քայլ յետոյ էլ քիչ  
մնաց, որ սպիտակեղէնի համար կապած թո-  
կից կախուէր. այս արդէն բոլորովին զայրաց-  
րեց նրան:

— Ո՞ւր ես տանում ինձ, անպիտան,  
բղաւեց նա Բէպպօի վերայ: — Այստեղ մարդ  
կարող է վիզը կտրել՝ կատարեալ դժոխք է:

— Այս ըստէին, այս ըստէին, պարոն բը-  
ժիշկ: Ելի ութ աստիճան և....

— Ի՞նչ, ութ աստիճան, մնաս բարև:

Ել չեմ կարող: Հիւանդներին ես ընդու-  
նում եմ չորեքշաբթի և ուրբաթ օրերը, ա-

ռաւօտեան ժամի իննից մինչև տասը....:

Եւ բժիշկն սկսեց դէպի վեր բարձրանալ:

Բէպպօի ձեռքերը թուլացան: Նա բոլո-  
րովին յոյսը կտրեց ու մտածեց. Ինչ կլինի հի-  
մա հիւանդի դրուժիւնը: Խեղձ Հենրիկոս:

Բայց յանկարծ մի բան անցաւ նրա մըտ-  
քովը: Նա արագութեամբ գրպանից հանեց  
թղթի մէջ փաթաթուած լուցկիները և դող-  
դոջուն ձեռքով նրանցից մէկը քսեց իւր ծըն-  
կանը և վառեց:

— Բժիշկ, աղաղակեց տղան աղերսելով՝  
իսէր Աստուծոյ.... հիմա լոյս կլինի.... Լուց-  
կին վառուեց և լուսաւորեց սանդուխքը: Բը-  
ժիշկն իջաւ ներքև: Միքանի վայրկեանից յե-  
տոյ նրանք մտան Վինկլէրի սենեակը:

Վառարանում այբուում էր փայտը: Սեղա-  
նի վերայ, հիւանդի մահճակալի մօտ, եփում  
ու եռ էր գալիս թէյամանով տաք ջուրը:

Օդը թէև քիչ մաքրուել էր, բայց դեռ  
էլի տիրում էր այսպիսի բնակարաններին յա-  
տուկ գարշահոտութիւնը: Բժիշկն երեսը ծըր-  
մուեց, քթածակերից ուժով արտաշնչեց, բայց  
և այնպէս նստեց հիւանդի մօտ և սկսեց զնը-

նել նրան: Նա Բէպպօից պակաս չզարմացաւ՝ տեսնելով նրա լղար գէմքի գեղեցիկ ու կանոնաւոր գծագրութիւնը: Նա իսկոյն հասկացաւ, որ այդ կինը հասարակ շրջանից չպէտքէ լինի:

Տիկին Վինկլէրն ուշքի եկաւ և թույլ ձայնով պատմեց բժշկին այն բոլորը, ինչ որ վերաբերում էր իւր հիւանդութեանը:

Բժիշկը պէտք է հիւանդի կուրծքն ու թոքերը քննէր, բայց անսպասելի արգելքի հանդիպեց. նա իւր գործիքները մոռացմամբ թողել էր՝ մի քանի ըոպէ առաջ այցելած հիւանդի տանը:

— Բէպպօ, վազիր շուտ այնտեղ, որտեղից որ հիմա եկանք: Հարցրու..... բայց չէ՛քեզ չեն տայ՝ աւելի լաւ է գրեմ: Մի կտոր թուղթ տուէք:

Բայց թուղթ չգտնուեց. բժիշկը յատակից վերցրեց մի ինչ որ իւրոտուած այցետոմս և մաքուր կողմի վերայ գրեց մի քանի խօսք:

— Այս կտաս այնտեղ. յետևի գոնե՛րից ներս մտիւր, որովհետև հիւանդին չնեղացնելու համար՝ երեկոյեանները զանգը կապում են:

Գնա՛, ափսոս որ սահնակս յետ ուղարկեցի, բայց ոչինչ, դու արագ վազող ես:

Բէպպօն գնդակի արագութեամբ դուրս վազեց փողոց, իւր վերջին քսան կոպէկը տալով՝ մի կառք վարձեց և սլացաւ արդէն ծանօթ ճանապարհով:

Մօտենալով այն տանը, որտեղ գտնուում էին բժշկի գործիքները, նա դիմեց ուղղակի գէպի բակի դուռը, որ գտնի յետևի մուտքը: Բայց այստեղ անբաղդ Բէպպօին պատահեց տան պահապանը և առանց հարց ու փորձի՝ բակից դուրս արեց նրան:

2.

Բէպպօն շատ վատ դրութեան մէջ էր: Բայց նա այն մարդկանցից չէր, որոնք հէնց առաջին անյաջողութեան հանդիպելիս՝ իրենց կորցնում են և յուսահատուում: Խելօք և եռանդոտ պատանին իսկոյն յիշեց, որ բակի դռանը կարելի է մօտենալ պարտիզի միւս կողմը գտնուող նեղ փողոցից. նա վազեց դէպի այդ լապտերով լուսաւորուած նեղ փողոցը և

երբ զննելով համոզուեց, որ մօտիկ ոչ ոք չըկայ, վանդակի վրայով կատուի պէս թռաւ այգին և մինչև գօտին խրուեց ձիւնի մէջ: Տարաբղտաբար անկարելի էր այգուց անցնել բակը, որովհետև ցանկապատի դուռը կողպած էր, իսկ այգին բակից բաժանող միջնորմի վերայ սրածայր մեխեր կային: Բէպպօն կէս ժամի չափ այս ու այն կողմն ընկնելուց յետոյ՝ քիչ մնաց որ լաց լինէր յուսահատութիւնից: Նա ստիպուած էր տուն վերադառնալ դատարկ ձեռքերով, որովհետև այլ ևս ոչ մի հրնար չկար՝ բժշկի նամակը տեղ հասցնելու: Բէպպօն կանգնած էր վանդակի մօտ և չգիտէր թէ ինչ անէ: Այդ ժամանակ նրա մօտով կառքով անցնում էր ծխախոտի գլանակը բերանին մի ինչ որ պարօն. նա երբ հասաւ Բէպպօնին, կառապանին հրամայեց կառքը կանգնեցնել: Այդ պարօնը նկատելով, որ բերանի ծխախոտը հանգել է, գրպանները քրքրեց ու փնթփնթաց.

— Ափսոս, մէջ մի լուցկի չի մնացել. արդեօք դու ունէս, հարցրեց նա կառապանին:

— Ո՛չ, պարօն:

Բէպպօնի սրտում յանկարծ յուսոյ նշուներ ծագեցին:

— «Է՛, ինչ ուզում է լինի, գուցէ...» — մտածեց նա, մի թուիչք գործեց և մօտեցաւ պարօնին:

— Ես լուցկի ունեմ, կամենամք, քաղաքավարութեամբ առաջարկեց Բէպպօն և վառեց լուցկին:

— Ա՛յ, շատ ապրիս, գովեց նրան պարօնը՝ կպցնելով իւր ծխախոտը, շնորհակալ եմ, սիրելիս, ահա՛ քեզ...:

Եւ նա Բէպպօնի ձեռքը մի քսան կոպէկանոց դնելով՝ քշել տուեց կառքը:

Բէպպօն ուրախացաւ: Նրա յոյսերն արդարացան. նա վազեց պահապանի մօտ: Պահապանը կրկին ուզում էր աւելով քշել նրան, բայց տեսնելով որ Բէպպօն իրեն արծաթեայ դրամ է առաջարկում, համաձայնեց նամակը յանձնել տիկնոջը:

— Ի՛նչ է ուզում, աղաղակեց այդ միջոցին պատուհանից աղախինը:

— Բժիշկն ուղարկեց, գործիքներն այստեղ է թողել: Վերցրու նամակը և տուր

տանտիկնոջը:

— Գործիքները. չէ որ հէնց այս րոպէին ուղարկեցինք բժշկի տուն, ասաց աղախինը՝ պահապանի ձեռքից նամակն առնելով:

Դ՛արձեալ անյաջողութիւն. Բէպպօն ամսոսաց իգուր կորցրած ժամանակի և անօգուտ ծախսած քսան կոպէկի վերայ և վազեց զէպի բժշկի բնակարանը:

Նա թէև չէր զգուժ, բայց բաւականին յօգնած էր և սաստիկ յուզմունքից ամբողջ մարմնով տաքացել էր: Նրա սիրտը սաստիկ բաբախում էր, շունչը կտրուում, իսկ քըրտինքը խոշոր կաթիլներով հոսում երեսից: Այն անքուն գիշերները, որ անց էր կացրել նա մեռնող հօր անկողնի մօտ, քաղցածութիւնը, ցուրտը և վերջին օրերում նրա կրած բոլոր տանջանքները, կարող էին նոյն իսկ հասակաւոր մարդուն ուժասպառ անել: Բայց Բէպպօն չէր նկատում, թէ ի՞նչպէս աստիճանաբար ոյժերը կորցնում էր. նա միայն մի նպատակ ունէր՝ օգնել թշուառ կնոջը. և այդ պատճառով էլ իւր ուժերը ներածին չափ սկըսեց վազել:

Վերջապէս գործիքները գտաւ և յանձնեց բժշկին, որ անհամբերութեամբ արդէն երկրորդ ծխախոտն էր ծխում և բարկանում Բէպպօի ուշանալու առթիւ:

Հիւանդը թոքախտ չունէր, բայց սաստիկ թոյլ էր և ուժասպառ. նրա տկարութիւնը վատ հանգամանքներից կարող էր թոքախտի փոխուել:

— Եթէ շարունակ այս հանգամանքների մէջ մնաք, ձեր կեանքին կարող է վտանգ սպառնալ, ասաց բժիշկը հիւանդին: Ես չեմ կարող երաշխաւորել, որ մի շաբաթ էլ կարողանաք ապրել այստեղ:

Ձեզ հարկաւոր է մաքուր օդ, թարմ և սննդարար կերակուր, լոյս, բնակարան և որ գլխաւորն է՝ հոգեկան հանգստութիւն. այդ է ձեր միակ դեղը, բայց և այնպէս ես ձեզ համար կգրեմ մի կազդուրիչ և քուն բերող դեղ: Հարևան դեղատնից կարող էք ձրի ստանալ:

Տկարն և երկու պատանիները շնորհակալութիւն յայտնեցին բժշկին և նա գնաց. պատանիները մոմով մինչև բակի դուռը ճա-

նապարհ գցեցին նրան:

Յետոյ Բէպպօն վազեց դեղատուն: Չանապարհին նա զգաց, որ գլուխը պտոյտ է գալիս և ոտքերը գողում են: Միշը ձեռին վերադառնալիս՝ նա հազիւ էր կարողանում ոտքի վերայ մնալ և ստիպուած էր պատին յենուել. նա սաստիկ գունատ էր և մի ընկալից յետոյ վայր ընկաւ յատակի վերայ.....

Է.

Բէպպօն երբ ուշքի եկաւ, նրա շուրջն անթափանցելի խաւար և մեռելային լուռութիւն էր տիրում. նրա քունքի երակները սաստիկ զարկում էին, իսկ ճակատը ծածկուել էր սառը քրտինքով:

— Տէր Աստուած, ինչ է պատահել ինձ, հրտեղ եմ, հազիւ լսելի ձայնով ասաց Բէպպօն՝ բռնելով իւր գլուխը, որ ծածկուած և փաթաթուած էր ջրով դրչած սառը տիւրյով:

Նա ձեռքով շօշափեց իւր շուրջը գտնուող առարկաները և զգաց, որ պառկած է սաւանով ծածկած փափուկ գահաւորակի վերայ, ոտները փաթաթուած են տաք վերմակով,

իսկ գլուխը դրուած է մետաքսեայ բարձի վերայ:

Դուռը կամաց բացուեց և մէկը զգուշութեամբ, ոտքի մատների վերայ, ներս մտաւ սենեակը: Բիչ ժամանակից յետոյ Բէպպօն իւր գլխի վերևը զգաց մէկի շնչառութիւնը:

— Ո՞րտեղ եմ, հարցրեց նա:

Պատասխան չկար:

— Ի սէր Աստուծոյ, ասացէք՝ հրտեղ եմ ես, կրկնեց նա: Դարձեալ լուռութիւն:

— «Երազումս եմ», վճռեց տղան, բայց յանկարծ շօշափեց գրպանում փաթաթուած թուղթը, որի մէջ մէկ լուցկի էր մնացել:

«Ո՛չ, երազ չէ, ահա՛ լուցկին և երկու լուցկու այրուած փայտերը, մտածեց նա. այժմ կիմանամ....»

Բէպպօն շուտով վերկացաւ, վառեց իւր վերջին լուցկին և գլխից վեր բարձրացնելով՝ բացագանչեց.

— Մերի.

— Բէպպօ՛.

Լուցկին հանգաւ և նրանք էլի մթուածեան մէջ մնացին:

— Ուրեմն դ՞ուք էք, Բէպպօ.

— Ես եմ, բայց... ճրտեղ եմ, շշնչաց տղան, որի առաջ մի քանի ըրպէով փայլեց աղջկայ լալագին աչքերով սիրելի և վարդագոյն պատկերը:

— Ես արդէն գիտէի, որ մենք երբևիցէ կրկին կպատահենք....

— Բայց ասան, Մերի, ճրտեղ եմ ես, և ինչ է պատահել ինձ:

— Դուք մեզ մօտ էք, մեր տանը... Զեզ ամենքին կառքով բերին և այստեղ տեղաւորեցին.... Բայց լռեցէք, ի սէր Աստուծոյ, դուք չպէտք է խօսէք, բժիշկն արգելել է: Դուք տկարացաք նեարդային հիւանդութեամբ.... Բէպպօ, ուրեմն դ՞ուք ազատեցիք Մարգարիտ Տորաքըրոյս, սիրելի, բարի և քաջ Բէպպօ: Այդ միջոցին Բէպպօն զգաց՝ թէ ի՞նչ պէս աղջկայ քնքոյշ, փափուկ ձեռքը փաղաքշում էր իրեն, շփում էր այտերը և ուղղում դէմքի վերայ թափուած թաց մազերը:

Նա ոչինչ չհասկացաւ աղջկայ ասածներին:

Ի՞նչ Մարգարիտ Տորաքըրոյ, սլմը բերին

կառքով, սլմն ազատեց ինքը և վերջապէս այս հանդիպումն....:

— Մերի, կարծեմ այս բոլորը երազ է... Ես սաստիկ յոգնել եմ, երեք գիշեր չեմ քնել, քաղցել էի, թուլացել, չեմ զառանցում արդեօք:

— Ո՛չ: Լսեցէք պատմեմ՝ թէ ի՞նչպէս է եղել... Բժիշկն ասաց մեզ բոլորը, նա հիմա էլ մեզ մօտ է, հօրեղբօրս սենեակումը: Այս այն բժիշկն է, որին դուք տարաք տկար հօրաքըրոյս, Մարգարիտի, մօտ և որի պատուէրով դուք մեզ մօտ եկաք գործիքների համար....

Յիշում էք, դուք մի տոմսակ բերիք բժշկին. այդ տոմսակն ամեն բան պարզեց. եթէ դուք բերած չլինէիք այն տոմսակը, շատ վատ կլինէր.... Պահապանը պատմեց՝ թէ ի՞նչ պէս է դուրս արել ձեզ բակից: Այդ տոմսակը բժիշկը գրել էր Տորաքըրոյս այցետոմսի վերայ՝ որի միւս երեսին տպուած էր. «Մարգարիտ Վինկլէր»: Երբ այդ տոմսակը հօրեղբօրս ձեռքըն ընկաւ, շատ զարմացաւ և անմիջապէս մարդ ուղարկեց բժշկի յետևից, որ իմանայ թէ

որտեղից է վերցրել այդ այցետոմսը: Բժիշկն եկաւ և ամեն բան պարզեց: Իսկոյն մարդ ուղարկեցինք ձեր յետևից և երեքիդ էլ այստեղ բերինք: Հօրաքոյրս չգիտէր, որ իւր եղբայրը Մոսկուայումն է ապրում և այդ պատճառով էլ առանց օգնութեան մնալով շատ աղքատ էր.... Ա՛խ, ի՛նչ զարմանալի տղայ էք, Բէպպօ: Ես երբէք չէի կարող այդպիսի բան անել.... Բժիշկը պատմեց, թէ ի՛նչպէս խնդրել էք նրան՝ գալ հիւանդի մօտ, տուել էք նրան ձեր վերջին քսան կոպէկը.... և այդ բոլորն արել էք իմ հօրաքրոջ համար....

Երբ բժիշկը պատմում էր, ամենքը լաց էին լինում: Հօրաքոյրս էլ անպատճառ կըլաւանայ, հիմա արդէն առաջուանից աւելի լաւ է:

— Իսկ Հենրիկօսը, հարցրեց Բէպպօն:

— Նա մեռածի նման քնած է դայեակի անկողնի վերայ: Իսկ ձեզ առ այժմ պառկեցրին այստեղ, մօրս առանձնասենեակում: Վաղը երկուսիդ համար էլ սենեակ կպատրաստեն վերևը, մանկանոցի կողքին, որտեղ ա-

ռաջ գրադարանն էր: Դէ՛հ, մնաք բարեաւ, Բէպպօ, քնեցէք հանգիստ և առողջացէք: Վաղը կտեսնուենք. այժմ ինձ երևի որոնում են. ես ծածուկ եկայ այստեղ, որ տեսնեմ՝ թէ արդեօք կենդանի էք: Բայց ես չգիտէի, որ դ՛ուք էք, Բէպպօ, մայրս էլ երևի ձեզ չճանաչեց:

Այժմ Բէպպօն ամեն բան հասկացաւ, թէպէտ տարօրինակ հանգամանքները զարմացրին նրան: Ի՛նչքան զարմանալի և համարեան թէ անհաստատալի իրողութիւններ էին պատահել մէկ օրուայ ընթացքում. որքան կերպարանափոխութիւններ. աղքատութիւնը փոխուել էր շքեղութեան, միայնակութիւնը՝ բարեկամների շրջանի. յուսահատութիւնը՝ քաղցրը յոյսերի.... Իսկ Մերին....

Այս մտածմունքների մէջ Բէպպօն քնեց կաղզուրիչ և խորը քնով:

Միւս օրը՝ նա առաւօտեան ուշ զարթեց: Նրա անկողնի մօտ կանգնած էին բժիշկը, Մերի մայրը և Հենրիկօսը: Բժիշկը ձեռքը դրեց նրա գլխին և շօշափեց զարկերակը:

— Երկաթի առողջութիւն ունի, ասաց նա ժպտալով: Եթէ նրա տեղ մի ուրիշը լինէր, մինչև հիմա վաղուց արդէն մեռած կլինէր, իսկ սա, ինչպէս տեսնում էք, մեզնից էլ զուարթ է և հարիւր տարի կապրի, եթէ ոչ աւելի: Քնեց, հանգստացաւ և կարծես թէ ոչինչ չէ պատահել:

— Քաղցած ես, Բէպպօ:

— Այո՛, շատ քաղցած եմ:

— Տեսնո՞ւմ էք, դիմեց բժիշկը տիկնոջը, իսկ զուք անհանգիստ էիք: Երկաթի կազմութիւն ունի սա:

— Ապրեն, տղայ, ապրեն, ասաց նա Բէպպօին՝ կարգի բերելով նրա մազերը: Այսպիսիները քիչ են հիմա: Խելք, ոյժ և եռանդ ունի... Իսկ ես խոստովանում եմ, երէկ ուզում էի քեզ զուրս անել՝ բայց զու շատ զարմացրիք ինձ:

Կէս ժամից յետոյ անկարելի էր ճանաչել Բէպպօին: Նրա երեսը լուացին, մազերը սանրեցին, նոր սպիտակեղէն և զգեստ հագցրին. նա այնպէս գեղեցկացաւ, որ ամենքը

հիանում էին: Հենրիկոսն ու Մերին չէին հեռանում նրանից. մէկն անսահման շնորհակալութիւն էր զգում դէպի նա, իսկ միւսը զարմանում և պաշտելու չափ յարգում էր նրան:

Տան միւս անդամներն էլ սիրով և յարգանքով էին վերաբերում Բէպպօին:

Ը.

Այսպիսով թշուառ նուագածուի որդին ապրում էր այժմ Մոսկուայի ամենահարուստ տներից մէկում:

Տիկին Վինկլէրը և Մերիի մայրը (որ այրի էր) հարազատ որդու պէս սիրեցին Բէպպօին և նրան էլ իրենց որդոց հետ դաստիարակեցին: Բէպպօն սիրով սկսեց սովորել. նա իւր հազուագիւտ ընդունակութիւնների շնորհիւ հեշտութեամբ էր ըմբռնում սովորածը և շուտով այնքան գիտութիւն ձեռք բերեց, որ իւր տարիքի համեմատ բաւականին շատ բան գիտէր:

Այդ ընդունակութիւնների հետ նա ցոյց տուեց և անսովոր երաժշտական ձիրք և ան-

Համեմատ բարձր էր իւր Հասակակիցներին: Նրա դէպի երաժշտութիւնն ունեցած սէրը շուտով գերազանցեց Բէպպօի միւս բոլոր ձրգտումներին: Երաժշտութիւնը դարձաւ նրա ամենասիրելի զուարճութիւնը: Բէպպօն նրան նուիրեց իւր բոլոր ժամանակը՝ ամեն օր համարեալ թէ մինչև ուժից ընկնելն աշխատելով:

Տասն և երկու տարեկան Հասակում նա արդէն նուագում էր դաշնամուրի վերայ ամենադժուար հատուածներ. բացի դրանից նա սիրով սկսեց երգել և շուտով զարմացրեց իւր ուսուցիչներին ինչպէս իւր անսովոր ընդունակութիւններով, այնպէս էլ հազուագիւտ ձայնով. արդէն երևում էր, որ նա ժամանակով պէտք է ունենայ ուժեղ և դուրեկան ձայն:

Ընտանեկան խորհրդում վճռեցին Բէպպօին ուղարկել Իտալիա. նա գնաց լի քսակով և դէպի երաժշտական արուեստն ունեցած վառ սիրով:

Մերիի համար շատ ծանր էր Բէպպօից բաժանուելը: Նա շատ էր սիրում Բէպպօին: Նոյն յարկի տակ միասին անցկացրած երեք

տարուայ ընթացքում նրանք այնքան սերտ բարեկամացել էին, որ Մերին չէր կարողանում երևակայել, թէ Բէպպօն պէտք է ընդմիշտ հեռանայ իրենից: Բաժանման օրերում Մերին այգու մի որևէ խուլ անկիւնում նրստած՝ ամբողջ ժամերով մտածում էր Բէպպօի մասին, թէ արդեօք սրտեղ է նա և թնչ է անում:


Մի տարուց յետոյ նրանք ամբողջ ընտանիքով նոյնպէս գնացին արտասահման—Ձուիցերիա և այնտեղ մնացին ընդմիշտ: Մերիի հօրեղբայրը զուիցերացի էր և միայն ժամանակաւորապէս էր ապրում Ռուսաստանում, որտեղ ունէր մի ինչ որ մեծ վաճառականական գործ: Այդ գործը վերջացնելուց յետոյ՝ նա վերադարձաւ հայրենիք և այնուհետև նրանք շուտ շուտ էին տեսնում Բէպպօին:

Անցաւ տասն և երկու տարի: Բէպպօի անունը հռչակուեց ամբողջ Եւրոպայում: Նա իւր ժամանակի ամենամեծ արուեստագետն և օպերայի առաջնակարգ երգիչն էր:

Նրա հրաշալի ձայնը և խաղը մեծ բազ-

մութիւն էր գրաւում: Ամեն տեղ, ուր որ նա  
երևում էր, նրան ընդունում էին ոգևորուած  
աղաղակներով և ծափահարութիւններով. ա-  
մեն տեղ դափնեայ պսակներ էին տալիս նրան:

Բէպպօն քաղաքից—քաղաք էր գնում և  
ստացած դափնիների հետ միասին նաև հա-  
րստութիւն էր դիզում: Բայց նա մենակ չէր  
ճանապարհորդում. նրան ամեն տեղ ուղեկ-  
ցում էր իւր կինը, Մերին: Բէպպօն ունէր մի  
այլ թանկագին իր ևս, որից նա երբէք չէր  
բաժանւում. այդ իրը մի ոսկեայ տուփ էր,  
որի մէջ պահուած էին Բէպպօնի հօր թողած  
երեք լուցկու կիսով չափ այրուած փայտիկ-  
ները: Նա պահպանում էր այդ լուցկիները՝  
ի յիշատակ իւր դժբաղտ հօր վերջին օրհնու-  
թեան. նա յիշում էր միշտ այն ճակատագրա-  
կան գիշերը, երբ իբրև թշուառ և պատառու-  
տած զգեստով աղքատ տղայ՝ վազվզում էր  
բժշկի յետևից. այդ լուցկիների շնորհիւ ահա  
նա կարողացաւ փոխել իւր բաղտի անիւը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0685907

